ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԿՎՀ-ԲԳՏ-Ն ԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1927—1934 թթ.)

Շ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Վ. Ի. Լենինը տակավին 1917 թ. նոյեմբերի 17-ին Սովետական Ռուսաստանի Կենտգործկոմի նիստում, ապա նոյեմբերի 18-ին բնակչությանն ուղղված կոչում արտահայտել էր այն միտքը, որ Ռուսաստանի գյուղատնտեսության զարգացման հետագա միակ ուղին հողի հանրային օգտագործումն է[1], իսկ «Կոոպերացիայի մասին» հոդվածում ուրվագծելով կոլեկտիվացման անհրաժեշտությունը, այն համարել էր գյուղացիական Ռուսաստանն աղքատությունից ու կարիքից փրկելու միակ ուղին[2]։

1927 թ. դեկտեմբերին Համ(բ)Կ XV համագումարը Վ. Ի. Լենինի այդ ցուցումների հիման վրա գտավ, որ «մանր անհատական գյուղացիական տընտեսությունները խոշոր կոլեկտիվների մեջ միավորելու և վերափոխելու խընդիրը պետք է դրվի որպես կուսակցության հիմնական խնդիր գյուղում»[3]։ Նման հետևությունը պայմանավորված էր սոցիալիստական շինարարության լուրջ հաջողություններով և սոցիալիզմի կառուցման ողջ պահանջով։ Այդ ժամանակաշրջանից էլ կուսակցության ու սովետական պետության ջանքերն ուղղվեցին երկրի ինդուստրացմանը զուգահեռ գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցի հրատապ լուծմանը։ Այդ գործում կարևոր դեր ուներ նաև Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով-բանգյուղտեսչությունը (ԿՎՀ-ԲԳՏ-Ն)։ Գյուղի կոլեկտիվացման վերաբերյալ համագումարի որոշումն իրագործելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1928 թ. հունվարի 25-ին ԿՎՀ-ի անդամների մասնակցությամբ հրավիրեց պլենում, որտեղ առաջադրված խընդիրները իրագործելու համար մշակվեցին անհրաժեշտ միջոցառումներ։ Պլենումը ԿՎՀ-ԲԳՏ-ին հանձնարարեց բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել կուսակցությանն այդ բնագավառում։

Գյուղատնտեսության վերակառուցման ասպարեզում ԿՎՀ-ԲԳՏ-ի գործունեության կարևորագույն ձևերից էր աշխատավորական լայն խավերի մասնակցությամբ մասսայական հետազոտությունների անցկացումը գյուղատնտեսության տարբեր հարցերի շուրջ։ 1926—1929 թթ. հետազոտությունների թիվն անցավ 70-ից։ Եթե 1926/1927 տնտեսական տարում ԿՎՀ-ԲԳՏ-ն պլանային կարգով հետազոտել էր գյուղատնտեսության 12 պրոբլեմային թեմա[4], ապա 1927/1928 թթ. այդ բնագավառում կատարվող հետազոտությունները կրկնապատկվեցին ու ավելի խոր բովանդակություն ստացան։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 360—361։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 555—565։

3 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում», մաս II, Երևան, 1955, էջ 601։

4 ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 91, ց. 2, գ. 480, թ. 26։

Միայն 1928 թ. գյուղատնտեսության ասպարեզում կատարված 28 հետազոտություններից 18-ը վերաբերում էին գյուղատնտեսական հանրային սեկտորի վիճակին ու զարգացման հեռանկարներին[5]։ Դրվում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք էին դասակարգային ուժերի տեղաբաշխումը գյուղում ու կուլակային տնտեսությունների սահմանափակման ուղիները, սովետական հարկային քաղաքականության կիրառումը, վարձու աշխատանքն ու վարձակալությունը գյուղատնտեսության մեջ, գյուղատնտեսական արտադրական կոոպերացիաների վիճակն ու դրանք տնտեսապես ամրապնդելու ուղիները, համայնական տնտեսությունների վարկավորման վիճակը, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը հանրային տնտեսություններում և այլն։ Քանի որ կոլեկտիվացման հաջողությունը կախված էր գյուղում դասակարգային ուժերի հարաբերակցությունից, ԿՎՀ-ԲԳՏ-ն հատուկ ուշադրություն էր դարձնում չքավոր և միջակ գյուղացիների միջև կապերի ամրապնդմանը։

ԿՎՀ-ԲԳՏ-ի հետազոտությունները ցույց էին տալիս իրերի իսկական պատկերը գյուղում և օգնում ճիշտ կիրառելու կուսակցության քաղաքականությունը։ Այսպես, 1927—1928 թթ. ԲԳՏ-ի հետազոտած 4 սովխոզներ ու 34 արտադրական կոոպերատիվներ չունեին ակտիվ բալանս և գործում էին պետական դոտացիայի հաշվին։

Հանրային տնտեսությունների այդպիսի վիճակը բացատրվում էր նրանով, որ նրանք իրենց կազմակերպչական սկզբունքով ցածր էին, թույլ՝ նյութական բազայով։ Այդ կոոպերացիաներն իրենցից ներկայացնում էին փոքրաթիվ տնտեսություններով ու աննշան հողատարածություններով հողի ընդհանուր մշակման ընկերություններ, որոնցում չէին բավարարում քաշող ուժը, սերմացուն, գյուղատնտեսական մեքենաները և գործիքները։ Աշխատանքները կատարվում էին պարզունակ եղանակով ու անորակ, պետության տված վարկերը նպատակին չէին օգտագործվում, իսկ կուլակներն էլ, խցկվելով հանրային տնտեսությունները (Վորոնցովկա, Ստեփանավան) զբաղվում էին վնասարարությամբ։

1929 թ. սկզբներին Հայաստանի ԿՎՀ-ԲԳՏ-ն ստիպված էր հարց հարուցել ՀԿ(բ)Կ Կենտկոմի ու Հայաստանի կառավարության առաջ՝ լուծարքի ենթարկելու մոտ 60—70 թույլ ու անկարող արտադրական ընկերություններ, որոնք խանգարում էին սոցիալիստական հանրային արտադրաեղանակի պրոպագանդմանը։ Նույն ժամանակ Հայաստանի կառավարությունը ԿՎՀ-ԲԳՏ-ի առաջարկով որոշեց դադարեցնել մոտ 40 կոոպերատիվների ցույց տրվող վարկային օգնությունը, որպեսզի վերջ տրվեն պետության հաշվին ապրելու առանձին տնտեսություններում առկա տրամադրություններին։ Նույն ժամանակ հողային ու գյուղատնտեսական օրգաններին առաջարկվեց կազմակերպել նոր արտադրական միավորներ, հիմնվելով միայն նրանց սեփական արտադրամիջոցների ու եկամտաբեր աշխատանքի վրա։

1929 թ. երկրորդ կեսից կազմակերպվող տնտեսություններում համայնացվում էին ոչ միայն հողն ու սերմֆոնդը, այլև քարշուժը, գյուղատնտեսական կարևոր գործիքները, տնտեսական նշանակություն ունեցող շինությունները, մթերատու անասունների որոշ մասը և այլն։ Եվ պատահական չէր, որ

---

[5] ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 128, ց. 1, գ. 2893, թ. 37, 43, 44։

նորակազմ տնտեսական միավորների համար նախորդ տարիներին կազմակերպված կոմունաներից ու կոոպերատիվներից ոչ բոլորը կարող էին բազա հանդիսանալ։

Հայաստանում ԿՎՀ-ԲԳՏ աշխատանքները գյուղատնտեսության բնագավառում 1929 թ. ընթացան ՀամԿ(բ)Կ XV, ՀԿ(բ)Կ V և VI համագումարների ու կուսակցության XVI կոնֆերանսի որոշումների իրագործման նշանաբանով։

1928/1929 տնտեսական տարվա պլանով նախատեսվող միջոցառումները թե՛ կենտրոնում և թե՛ ստորին օղակներում արտահայտում էին կուսակցական այդ բարձրագույն օրգանների պահանջները։ Այդ պլանով նախատեսված առաջադրանքները վերաբերում էին գյուղատնտեսության զարգացման հնռանկարները պարզաբանող հարցերին, մասնավորապես գյուղում կոլեկտիվացմանն ուղղությամբ կատարվող տեղաշարժին, տեխնիկական կուլտուրաների զարգացմանն ու բերքատվության բարձրացմանը, հանրապետության շրջանացմանը, շրջանների մասնագիտացմանը, արտադրության կազմակերպման առաջավոր փորձի արմատավորմանը, չքավոր ու միջակ գյուղացիների դաշինքի ամրապնդմանը և այլն։ Այդ ժամանակ ԿՎՀ-ԲԳՏ-Ն հատուկ ուշադրություն էր դարձնում գյուղատնտեսական արտադրության զարգացման տարբեր ուղիների նոր ուսումնասիրություններին[6]։ ԿՎՀ-ԲԳՏ-ի տվյալ հետազոտությունների, հետևությունների ու առաջարկների հիման վրա Հայաստանի կառավարությունը 1928 թ. ընդունեց մի շարք կարևոր որոշումներ՝ ուղղված հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը։

ԿՎՀ-ԲԳՏ-ի հետազոտությունների մի մասը ամփոփվելով անդրկովկասյան և միութենական պետական օրգանների մակարդակով, դառնում էր այդ օրգանների ընդունած համապետական որոշումների ու ցուցումների հիմքը։ Վերոհիշյալ հետազոտությունների և ուսումնասիրությունների շնորհիվ ոչ միայն շտկվեցին գյուղատնտեսության բնագավառում գոյություն ունեցող շատ բացեր ու թերություններ, այլև կառավարման գործի բարելավման վերաբերյալ բավականին փաստական նյութ կուտակվեց։ 1929 թ. Հայաստանի կառավարությունն օգտագործելով ԿՎՀ-ԲԳՏ-ի հետազոտությունների արդյունքներն ու առաջարկությունները, ուղղեց հողաշինարարության ասպարեզում տեղ գտած զգալի սխալներ։ Խստիվ արգելվեցին հողի ազգայնացման սովետական օրենքների խախտումները, սահմանափակվեցին կուլակային տնտեսությունների հողօգտագործման, բանուժ վարձելու ու հողի վարձակալման իրավունքները, խիստ հսկողություն սահմանվեց պետական վարկերի բաշխման վրա, միջոցներ ձեռնարկվեցին օրինակելի տնտեսություններ ստեղծելու ուղղությամբ, ընդլայնվեց պետական բուծարանների, մեքենաօգտագործման ու վերանորոգման կայանների, վարկային ու կոոպերատիվ ընկերությունների ցանցը։ Գյուղը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու նախապատրաստման գործում լուրջ նշանակություն ունեցան վարկային ընկերությունների ստեղծումն ու ամրապնդումը, ինչպես նաև գյուղփոկերի աշխատանքների վերակառուցումը։ Կուլակային ու խորթ տարրերը ՓՕԿ-երից դուրս մղվեցին, բարելավվեց գյուղատնտեսական մթերքների մթերման կարգն ու գյուղն արդյունաբերական ապրանքներով մատակարարելու գործը։

---

6 Նույն տեղում, գ. 2405, թ. 24։

Ձեռք բերված հաջողությունների շնորհիվ Հայաստանի գյուղատնտեսությունը 1928 թ. գերազանցեց 1913 թ. մակարդակը հողագործության գծով՝ 3,5%-ով, իսկ անասնաբուծության գծով՝ 1,5%-ով։ 1928 թ. ցանքատարածությունները կազմեցին 331,0 հազ. հա, իսկ անասունների գլխաքանակն անցավ 850,0 հազ.[7]։

ԿՎՀ-ԲԳՏ-ի օժանդակությամբ մեծ աշխատանքներ կատարվեցին արևմտահայ գաղթականությանը տեղավորելու, հողով բավարարելու, մարդաշատ բնակավայրերից որոշ քանակությամբ տնտեսություններ նոր վայրերում վերաբնակեցնելու, նոր հողատարածություններ յուրացնելու (մոտ 7.000 հա) ասպարեզում։ Զգալի աշխատանք կատարվեց նաև հողերի մելիորացիայի ու ոռոգման բնագավառներում։ Ցամաքեցվեցին Ղամարլուի ճահիճները և օգտագործման հանձնվեց 3.150 հա բերրի հող, ավարտվեց մի քանի ջրհան կայանների շինարարությունը (Խոր-Վիրապ, Էջմիածին), ապահովվեց Էջմիածնի ջրովի հողերի մեքենայացված ոռոգումը։ Միայն Խոր-Վիրապի ջրհան կայանի կառուցմամբ, որի վրա ԿՎՀ-ԲԳՏ-ն ամենօրյա վերահսկողություն էր սահմանել, 1929 թ. ապահովվեց 900 հա բամբակի ցանքի ոռոգումը։ Ավարտվեցին Սարդարապատի ջրանցքի փոքր հատվածի, Շիրակի ջրանցքի վերջին հատվածի և Կարճևանի ջրանցքի շինարարությունները, բարձրացվեց գյուղատնտեսության մեքենայացման աստիճանը, որը չէր կարող դրական ազդեցություն չունենալ գյուղի սոցիալիստական վերափոխման նախապատրաստման վրա։

ԿՎՀ-ԲԳՏ-ն կարևոր աշխատանք էր կատարում թանկարժեք տարբեր տեխնիկական կուլտուրաների արմատավորման ուղղությամբ։ Կազմակերպվեցին մոտ 5 փորձադաշտեր՝ բամբակի, ծխախոտի, յուղատու բույսերի և այլ կուլտուրաների մշակման համար։ Ընդլայնվեցին այգիները, պտղաբուծարանները ու բանջարանոցները։ 1926 թ. կարկտահարությունից հետո, երբ խաղողի այգիների 80%-ը գրեթե ոչնչացվել էր, արդեն 1928 թ. դրանք լիովին վերականգնվել էին և 9.800 հա խաղողի այգիներից ստացվեց 94.283 տ. խաղողի բերք։

Հատուկ ուշադրություն էր դարձվում անասունների գլխաքանակի ավելացմանը։ Այդ նպատակով նոր բուծարաններ ստեղծվեցին Լենինականի, Լոռու, Դարալագյազի, Դիլիջանի ու Զանգեզուրի գավառներում։

Գյուղատնտեսության վերելքի ու վերակառուցման ասպարեզում կարևոր նշանակություն ուներ պետության նյութական օգնությունը գյուղացիությանը։ Միայն 1928 —1929 թթ. պետությունը գյուղին ցույց տվեց մոտ 500 հազ. ռ. վարկային օգնություն, որից 250.000-ը՝ անվերադարձ։ Վարկի բաժանմանը վերահսկում էր ԿՎՀ-ԲԳՏ-ն։ Հիմնականում վարկավորվեցին հանրային տնտեսությունները։

Կուսակցության ամենօրյա օժանդակությունը, նրա որոշումների ու դիրեկտիվների կատարման վերահսկումը, արգելքների ու խոչընդոտների ժամանակին հայտնաբերումն ու շտկումը բարենպաստ պայմաններ էին ստեղծում գյուղի սոցիալիստական վերակառուցման համար։ Այդ ասպարեզում հիմնական փորձը ձեռք բերվեց այն հանրային տնտեսությունների միջոցով,

---

7 «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր, 1926—1927 և 1927—1928 թթ.», Երևան, 1929, էջ 61։

որոնք ստեղծվել էին մինչև մեծ բեկումը։ Դրանց թիվը 1928 թ. հասավ 205-ի, որոնց մեջ ընդգրկված էին 65.800 մարդ[8]։

Կազմակերպչական բնույթով լինելով տարատիպ (մասնագիտական ու վարկային ընկերություններ, կոմունաներ, սովխոզներ, արտելներ և այլն), նրանցից բոլորը չէ, որ նոր արտադրաեղանակի կազմակերպման հիմք կարող էին հանդիսանալ։ ԿՎՀ-ԲԳՏ-ի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գյուղում սոցիալիստական արտադրության կազմակերպման ամենանպատակահարմար ու հեռանկարային ձևը արտադրական արտելների կազմակերպումն է, որտեղ հողօգտագործումը կոլեկտիվ է և հողի մշակման բոլոր հիմնական միջոցներն ու արտադրությունն ունեն հանրային բնույթ։

Չնայած կուսակցության մեծագույն ջանքերին ու գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նոր ձևի ճիշտ ընտրությանը, ո՛չ գյուղատնտեսությամբ զբաղվող հատուկ օրգաններին և ո՛չ էլ ԿՎՀ-ԲԳՏ-ին չհաջողվեց մինչև վերջ պարզ ու հստակ մշակված վեր հանել կոլտնտեսային արտադրության կազմակերպման այն հարցերը, որոնք անհրաժեշտ էին տվյալ ժամանակաշրջանում, հատկապես նրանց օրինակելի կառուցվածքի, ներարտադրական աշխատանքի կազմակերպման, վարձատրման կարգի, մասնագիտական ուղղությունների ընտրման և այլ տեսակետներից։

Դա էր այն պատճառներից մեկը, որը սոցիալիզմի ընդհանուր ճակատով հարձակման շրջանում կոլտնտեսային շինարարությունը լուրջ դժվարությունների առաջ կանգնեցրեց։ Ճիշտ է, կոլտնտեսային շինարարության ամբողջ ընթացքում այդ սխալներն ուղղվեցին ու թերությունները վերացվեցին, սակայն դա կատարվեց մեծ դժվարությունների ու զոհաբերությունների գնով։ 1929 թ. վերջին և 1930 թ. սկզբին կոլտնտեսային շինարարության ասպարեզում սկսվեց նոր շրջան։ Վերակազմված ու կազմակերպորեն ամրապնդված վերահսկիչ օրգանները սկսեցին ավելի լայն ճակատով իրագործել համաժողովրդական սոցիալիստական վերահսկողություն կոլտնտեսային շարժման պատասխանատու ու բարդ խնդրի լուծման վրա։

ԿՎՀ-ԲԳՏ-ն այդ ժամանակաշրջանում ղեկավարվում էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի, մարտի 14-ի, իսկ հուլիսի կեսերից՝ ՀամԿ(բ)Կ XVI համագումարի որոշումներով։ Համագումարը ԿՎՀ-ԲԳՏ-ի առաջ խնդիր էր դնում շարունակել պայքարը կուսակցության միասնության ապահովման համար ու ցուցաբերել բարձր զգոնություն, օժանդակել երկրի ինդուստրացմանն ու նոր տնտեսության բուռն զարգացմանը, ամենուրեք բարելավել պետապարատի գործունեությունն ու երկրի կառավարման գործը, ծավալել բոլշևիկյան քննադատություն ու ինքնաքննադատություն, մերկացնել բյուրոկրատիզմը։

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում կուսակցական կազմակերպություններն ու սովետական օրգանները կոլտնտեսային շարժման ասպարեզում թույլ տվեցին սխալներ։ Խախտվեցին կոլեկտիվացման կամավորության սկզբունքները, արագացվեց նրա ընթացքը, խեղաթյուրվեցին ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի հունվարի 5-ի որոշման պահանջները։ Քրտնաջան բացատրական աշխատանքի փոխարեն գործադրվեցին կոպիտ վարչարարական միջոցներ և այլն։ Հայաստանում առկա էին աջ ու «ձախ» տատանումներ, որով կոլտնտեսային շարժման գործը վտանգվում էր։

8 ՀՍՍՀ ՀԱՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2893, թ. 34։

Ղեկավարվելով Համկ(բ)կ Կենտկոմի և ԿՎՀ-ի ցուցումներով ու կուսակցության XVI համագումարի որոշումներով, Հկ(բ)կ ԿՎՀ-ի 1930 թ. ապրիլյան ու սեպտեմբերյան, 1931 թ. հուլիսյան պլենումներում բարձրացվեց կոլտնտեսային շարժման մեջ եղած թերությունների դեմ պայքարի հարցը և մատնանշվեցին այդ բնագավառում ԿՎՀ-ԲԳՏ-ի հրատապ անելիքները։

Վերոհիշյալ պլենումներում խնդիր դրվեց անհապաղ ուղղել կուսակցության գլխավոր գծից եղած շեղումներն ու սխալները։

Այս բնագավառներում ԿՎՀ-ԲԳՏ-ն գնաց հետազոտությունների, կոնկրետ միջոցառումների ձեռնարկման ու տեղերում տնտեսություններին գործնական օգնություն ցույց տալու ուղղով։ Տվյալ ժամանակամիջոցում ավելի էր ծավալվել համաժողովրդական վերահսկողության գործը։ Ամենուր ձևավորվել ու ճանաչում էին գտել ԿՎՀ-ԲԳՏ-ին օժանդակող տարբեր օղակները։ Կուսակցության Անդրկովկասի երկրային կոմիտեի և երկրային վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի շրջաններում ստեղծվել ու գործում էին 26 ՇՎՀ-ԲԳՏ-ներ, որոնց գործունեության հիմնական խնդիրներից մեկը կոլտնտեսային շարժմանն օժանդակելն էր։ Նրանք եռանդուն աշխատանք ծավալեցին նորաստեղծ կոլտնտեսություններին գործնական օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Այսպես, օրինակ, Արթիկի ՇՎՀ-ԲԳՏ-ն 1931 թ. շրջանի 16 կոլտնտեսություններում կազմակերպել էր ԲԳՏ-ին օժանդակող բջիջներ, կոլտնտեսություններին օգնել տարեկան պլանների կազմման, հաշվապահական գործի դրվածքի բարելավման, կոլտնտեսային կադրերի տեղաբաշխման ու աշխատանքի կազմակերպման գործում։ ՇՎՀ-ԲԳՏ-ն կոլտնտեսություններին օժանդակել էր կազմակերպելու անասունների ձմեռման, գարնանացանի անցկացման, ցանքսերի խնամքի գործը։ Այդ տարվա ամռանն ու աշնանը ՇՎՀ-ԲԳՏ-ն սիստեմատիկաբար վերահսկեց բերքահավաքի ընթացքը, բերքի պահպանման ու պահեստավորման գործը, պետական պարտավորությունների կատարումն ու կոլտնտեսություններում բերքի օրինակելի բաշխումը։ ՇՎՀ-ԲԳՏ կողմից կոլտնտեսություններին ցույց տրված օգնության շնորհիվ շրջանի կոլտնտեսությունները տնտեսապես ու կազմակերպչորեն ամրացան։

ՇՎՀ-ԲԳՏ-ների կողմից կոլտնտեսային շարժմանը նման օգնություն ու օժանդակություն կազմակերպվեցին հանրապետության բոլոր շրջաններում։ Հենց այդ ժամանակ էլ ՇՎՀ-ԲԳՏ-ները շրջանային կուսակցական ու սովետական օրգանների հետ ձեռնարկեցին նոր հետազոտություններ կոլտնտեսությունների կառուցվածքի կատարելագործման, հողաշինարարության, կոլտնտեսային արտադրության մեքենայացման, ագրոմիջոցառումների կիրառման, աշխատանքների պլանավորման, սերմերի հայթայթման, կոլտնտեսությունների ու մեքենատրակտորային կայանների փոխհարաբերության բարելավման, կոլտնտեսային օրինակելի կանոնադրության սկզբունքների արմատավորման ու կիրառման ուղղությամբ։ Հիշատակելի է, որ ԿՎՀ-ԲԳՏ ուսումնասիրության շնորհիվ էր, որ Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1931 թ. հոկտեմբերի 17-ին որոշում ընդունեց «Կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման մասին»։ Ընդգծելով այդ բնագավառում գոյություն ունեցող թերությունները (հատկապես Ապարանի, Մարտունու, Բասարգեչարի, Աղբաբայի, Վեդիի շրջաններում), որո-

շումը միաժամանակ մատնանշեց մի շարք միջոցառումներ դրանք վերացնելու համար։

1932—1933 թթ. ԿՎՀ-ԲԳՏ-Ն գյուղատնտեսության բնագավառում կատարեց 103 թեմատիկ հետազոտություն, որոնք վերաբերում էին կոլեկտիվ տնտեսության զարգացման ուղիներին[9]։ Այդ հետազոտությունների հիման վրա Հայաստանի կառավարությունը մշակեց միջոցառումների մի ամբողջ սիստեմ, որի իրականացումը գտնվում էր ինչպես ԿՎՀ-ԲԳՏ-ի, այնպես էլ ՀՍՍՀ ժողկոմխորհին կից գործող ստուգման հանձնաժողովի վերահսկողության տակ։ Դրանք հիմք հանդիսացան տնտեսության տարբեր ճյուղերում ապահովելու առաջընթաց ու վերացնելու տեղ գտած թերությունները։ Վերահսկողության ուժեղացման ու նրա կարևորության առումով ուսանելի էր ԿՎՀ-ԲԳՏ-ի կողմից Ալավերդու շրջանի Արդվին գյուղի կոլտնտեսության վիճակի ուսումնասիրությունը։ Այն ցույց տվեց, որ կոլտնտեսությունը կազմակերպման օրվանից ապրում է լուրջ դժվարություններ, ցածր է աշխատանքային կարգապահությունը, չեն կատարվում արտադրական պլանները, վատ է պահպանվում կոլտնտեսային սեփականությունը։ Դարալագյազում դասակարգային թշնամուն հաջողվել էր ապակողմնորոշել Արփա և Խաչիկ գյուղերի կուսակցական ու կոմերիտական կազմակերպություններին՝ կոլտնտեսային շինարարության բնագավառում նրանց հակադրելով կուսակցության գծին։ Շամշադինի, Իջևանի, Ղարաքիլիսայի, Թալինի, Բասարգեչարի շրջաններում կուլակները կարողացել էին ահաբեկել մարդկանց և ստիպել դուրս գալու կոլտնտեսություններից։ Կոլտնտեսային շինարարության դեմ մղած պայքարում կուլակները որոշ վայրերում դիմել էին զենքի ու կազմակերպել խռովություն։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ԲԳՏ-ի հետազոտությունները ցույց տրվեցին, որ Շամշադինի շրջանի Բերդ գյուղում «կուլակաթափ» էին արել ու գյուղից քշել տասնյակ միջակ գյուղացիների, որոնք հրաժարվել էին կոլտնտեսություն մտնել։ Նույնն էր տեղի ունեցել շրջանի այլ գյուղերում և Իջևանի ու Էջմիածնի շրջաններում։ Որպեսզի գյուղացիները հարկադրաբար մտնեն կոլտնտեսություն, Իջևանում ու Աշտարակում կոլտնտեսությունների պարտքերը վերադրել էին շրջանի մենատնտես գյուղացիության վրա, իսկ Աշտարակի ու Կոտայքի որոշ գյուղերում հանրայնացվել էր նաև տնային գույքի մի մասը[10]։

Նման երևույթները չէին կարող չանհանգստացնել կուսակցական ու սովետական օրգաններին։ ԿՎՀ-ԲԳՏ-Ն կուսակցական կազմակերպությունների ու սովետական օրգանների հետ ուղղեցին կոլտնտեսային շինարարության ասպարեզում տեղ գտած սխալները և արդեն 1933 թ. հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների 40%-ից ավելին ընդգրկվել էր կոլտնտեսություններում։

Կոլտնտեսային կարգերի ամրապնդման կարևորագույն միջոցներից էին համայնական սեկտորի մեքենայացումը, աշխատանքի սոցիալիստական ձևերի կազմակերպումն ու ամրապնդումը։ Եթե 1932 թ. Հայաստանի կոլտնտեսություններում կային 298 տրակտոր, 6.643 գութան, 1.699 շարքացան, 168 հնձող մեքենա, 352 խոտհնձիչ, 36 կալսիչ, 502 սերմազտիչ[11], ապա

9 ՄԼԻ արխիվ, ֆ. 91, ց. 1, գ. 480, թ. 63։

10 Նույն տեղում, ֆ. 1, ց. 15, գ. 17, թ. 57—58։

11 Նույն տեղում, ֆ. 91, ց. 2, գ. 480, թ. 62։

1933 թ. դրանց թիվն աճեց 40—45%-ով։ ԿՎՀ-ԲԳՏ-ն ու կուսակցական կազմակերպությունները ոչ միայն զբաղվում էին կոլտնտեսությունները տեխնիկապես զինելու, այլև այդ տեխնիկայի լիարժեք օգտագործման հարցերով, որի նկատմամբ առանձին շրջաններում ցուցաբերվում էր անհանդուրժելի անտարբերություն (Գորիս, Սիսիան, Աղրարա, Փաշալու և այլն)։ Պատահական չէ, որ ԿՎՀ-ԲԳՏ-ն ստիպված եղավ հարց հարուցել ՀԿ(բ)Կ ԿԿ առաջ հատուկ որոշում ընդունելու Գորիսի գյուղատնտեսական օրգանների վերաբերյալ, որոնք թերագնահատում էին գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների նշանակությունը կոլտնտեսային շինարարության ամրապնդման ասպարեզում և դրանք չէին օգտագործում։

Իրագործելով կոլտնտեսային շինարարության բնագավառում կուսակցության գլխավոր գիծը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ԿՎՀ-ն հասան այն բանին, որ 1931—1932 թթ. կոլտնտեսությունների ցանքատարածությունները կրկնապատկվեցին, և գյուղատնտեսության հանրային արտադրանքը 2—3 անգամ աճեց։ Եթե 1931 թ. կոլտնտեսությունների ցանքատարածությունները կազմում էին 56.136 հա, ապա 1933 թ. դրանք հասան 124.201 հա[12]։ Կուսակցական կազմակերպությունների ու ԿՎՀ-ԲԳՏ-ի ջանքերի շնորհիվ հանրապետության հանրային անասնաբուծության զարգացման բնագավառում լուրջ բեկում տեղի ունեցավ։ ԿՎՀ-ԲԳՏ-ի հետազոտություններն օգնեցին ընդլայնելու և եկամտաբեր դարձնելու անասնաբուծության մի շարք ճյուղեր, ստեղծելու բազմաճյուղ անասնապահություն, բարելավելու կոլտնտեսային ֆերմաների վիճակը։ ԿՎՀ-ԲԳՏ-ի աջակցությամբ և օգնությամբ 1933 թ. երկրորդ կեսին հանրապետության հանրային անասնաբուծությունը հասել էր զգալի հաջողությունների[13]։ Վերելք ապրեցին խոզաբուծությունը, թռչնաբուծությունը, ճագարաբուծությունը և կաթնապրանքային տնտեսությունը։ Այդ ժամանակաշրջանում ԿՎՀ-ԲԳՏ-ի նախաձեռնությամբ կազմակերպվեցին մի շարք անասնապահական ապրանքային սովխոզներ, սերմնավորման կայաններ[14]։ Լեռնային անասնապահական շրջաններում կառուցվեցին ավելի քան 11 պանրագործարաններ, որոնք պետք է ապահովեին հանրային սեկտորից ու մթերման կարգով ստացված կաթի վերամշակումը։

Ծավալուն աշխատանքներ տարվեցին անասունների համար կերային բազայի ստեղծման ուղղությամբ։ Առաջին անգամ մասսայական բնույթ ստացավ կերի սիլոսացումը. ընդլայնվեցին եգիպտացորենի, ճակնդեղի և այլ կուլտուրաների ցանքատարածությունները։

ԿՎՀ-ԲԳՏ-ն մշտական հսկողության տակ էր պահում կոլտնտեսային արտադրության պլանավորումը, նպաստելով կոլտնտեսություններում աշխատանքի գործավարձային սիստեմի արմատավորմանը, օրավարձի նորմավորմանը, հողաշինարարական աշխատանքների ժամանակին անցկացմանը և ագրոմիջոցառումների կիրառմանը։

ԿՎՀ-ԲԳՏ-ն հանրապետական հողժողկոմատի, կոլտնտկենտրոնի ու տրակտորկենտրոնի հետ մշակեց ու անցկացրեց մի շարք գյուղատնտեսական մասնագիտությունների գծով կարճատև դասընթացներ։

---

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Վրացական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 804, ց. 1, գ. 2355։

Կոլտնտեսային շինարարության ասպարեզում ԿՎՀ-ԲԳՏ-ի գործունեության մեջ կարևոր տեղ գրավեց կոլտնտեսությունների ներքին կառուցվածքի հարցը։ Սանահինի, Կոշի, Քյորփլուի, Ռինգի, Թայչարուխի կոլտնտեսություններում անցկացված հետազոտությունները ցույց տվեցին, որ դրանց կառուցվածքի և աշխատանքի կազմակերպման հարցերում կան լուրջ թերություններ, արտադրական բրիգադները չեն դարձել այդ տնտեսությունների հիմնական արտադրական միավորը, շատ տեղերում հողատարածությունները, գյուղատնտեսական գործիքները, լծկան անասունները չէին կցված բրիգադներին, իսկ բրիգադները չէին բաժանված օղակների։

ԿՎՀ-ԲԳՏ-Ն կուսակցական ու սովետական օրգանների հետ միասին մոբիլիզացրեց բոլոր ուժերը կարգավորելու բրիգադների կառուցվածքը, ուշադիր հսկելով կոլտնտեսային արտադրության կազմակերպմանն ու կոլտնտեսային օրինակելի կանոնադրության հետևողական կիրառմանը։

Համկ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. մարտի 26-ի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի նույն թվականի մայիսի 27-ի որոշումների ճշգրիտ կենսագործման նշանաբանով կոլտնտեսությունների կազմակերպական-քաղաքական ամրացմանը հիմնովին օգնեց կոլտնտեսային վարչական ապարատի զտումն ու վարչական ծախսերի կրճատումը։ Համկ(բ)Կ և ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեների ցուցումների համաձայն ԿՎՀ-ԲԳՏ-Ն 1933 թ. հունիս-հուլիս ամիսներին գլխավորեց կոլտնտեսությունների վարչական ապարատի ստուգումն ու զտումը[15]։ Հայաստանի 26 գյուղական շրջաններում գոյություն ունեցող 912 կոլտնտեսություններից վարչական ապարատի զտում անցկացվեց 857-ում[16]։ Ստուգվեցին 2.319 մարդ, որոնց գործերի քննարկմանը մասնակցեցին 68 հազար կոլտնտեսական ու աշխատավոր մենատնտես։ Ստուգման հետևանքով 297 մարդ վռնդվեց կոլտնտեսություններից, հափշտակումների, վատնումների և այլ մեղադրանքներով 81 մարդ դատի տրվեց։ Ավելի քան 250 առաջավոր կոլտնտեսականներ առաջ քաշվեցին վարչա-կազմակերպչական աշխատանքների։ Այդ միջոցառումը էապես նպաստեց կոլտնտեսությունների կազմակերպական-քաղաքական ու տնտեսական ամրապնդմանը։

1933 թ. ԿՎՀ-ԲԳՏ-Ն զբաղվեց նաև կոլտնտեսություններում վարչական ծախսերի կրճատման հարցով, նպատակ ունենալով բարձրացնել աշխօրի արժեքն ու կշիռը՝ որպես կոլտնտեսականի վարձատրության չափանիշ։ Օրինակ, ստուգումը պարզեց, որ Ախտալի շրջանի Թայչարուխ գյուղի կոլտնտեսությունում, ըստ արտադրական պլանի, հանրային տնտեսությունը 1932 թ. ընթացքում պետք է ծախսեր 15.000 աշխօր, այնինչ ծախսել էր 25.000 աշխօր, հանգեցնելով աշխօրի արժեքազրկմանը։ Ալավերդու շրջանի Դսեղ և Սանահին գյուղերի, Աղբաբայի շրջանի Գյուլլի, Գյուլլիջա, Արթիկի ու Ղամարլուի շրջանների մի շարք կոլտնտեսություններում վարչական ապարատի պահպանման վրա ծախսվում էր այդ կոլտնտեսությունների վաստակած տարեկան աշխօրերի 11—12%-ը։ Որոշ կոլտնտեսություններում նախագահներն ստանում էին ավելի շատ աշխօր, քան ամենահարվածային կոլտնտեսականը։ Մի շարք շրջաններում կոլտնտեսային օրինակելի կանոնադրության սկզբունքներին հակառակ, շրջանային սովետական աշխատողները նույնպես

15 Մշի արխիվ, ֆ. 91, ց. 2, գ. 480, թ. 70։
16 Նույն տեղում։

վարձատրվում էին աշխօրերով կամ կոլտնտեսությունների պահեստից նրանց մթերք էր հատկացվում։ ԿՎՀ-ԲԳՏ-ի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նման խախտումները կանխվեցին։ Դրանով զգալիորեն կրճատվեցին կոլտնտեսությունների վարչակառավարչական ծախսերն ու կատարելագործվեցին նրանց տնտեսավարման ու ղեկավարման սկզբունքները։

Նույն թվականի աշնանը ԿՎՀ-ԲԳՏ-ն հանրապետության կոլտնտկենտրոնին և հողժողկոմատին առաջարկեց մշակել կոլտնտեսությունների վարչակառավարչական ապարատի օրինակելի հաստիքներ և սահմանել վարչական ծախսերի առավելագույն մակարդակ, որը չպետք է անցներ կոլտնտեսությունում վաստակված աշխօրերի 8%-ից[17]։ Մեծ աշխատանք ծավալվեցին կոլտնտեսային անբաժանելի ֆոնդերի ստեղծման ու հանրային կապիտալ շինարարության ծավալման ուղղություններով։

Իրագործելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. փետրվարի 4-ի որոշումը, ԿՎՀ-ԲԳՏ-ն շրջկոմների, ՄՏԿ-ների քաղբաժինների հետ միասին պայքար կազմակերպեց կոլտնտեսություններում օրինակելի կարգուկանոն հաստատելու և բարձր արտադրողականության հասնելու համար։ ՄՏԿ-ների հաջող գործունեության շնորհիվ 1933 թ. գարնանացանի աշխատանքներն ավարտվեցին ժամանակից շուտ ու բարձր որակով։ Այդ տարվա բամբակի ցանքերի 78—80%-ը կատարվեց ՄՏԿ-ների միջոցով։

ԿՎՀ-ԲԳՏ-ն հետևում էր ինչպես ՄՏԿ-ների արտադրական գործունեությանը, այնպես էլ նրանց պահեստամասերով, վառելիքով ապահովելուն, մեքենաների վերանորոգումը ժամանակին կազմակերպելուն և այլն։

Ընդհանրացնելով ԿՎՀ-ԲԳՏ-ի կատարած աշխատանքը կոլտնտեսային շինարարության բնագավառում, 1933 թ. աշնանը կուսակցության Անդրկովկասյան երկրային կազմակերպության ԿՎՀ-ի պլենումն ընդգծեց Հայաստանում ձեռք բերված նշանակալից հաջողություններն ու ՀՍՍՀ-ում ԿՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքի դրական փորձը կոլեկտիվացման համար մղված պայքարում։ Հայաստանի ԿՎՀ-ԲԳՏ գործունեությունը բարձր գնահատականի արժանացավ նաև ՀԿ(բ)Կ IX համագումարի կողմից։ Կուսակցության լարված աշխատանքի ու ԿՎՀ-ԲԳՏ-ի օժանդակության շնորհիվ Հայաստանում կոլտնտեսային շինարարությունը առաջին հնգամյակի վերջին խոշոր հաջողությունների հասավ։

ЦКК-РКИ И КОЛХОЗНОЕ СТРОИТЕЛЬСТВО В АРМЕНИИ В 1927 — 1934 гг.

Ш. А. ПОГОСЯН

Резюме

ЦКК-РКИ была важным рычагом партии в строительстве социализма. В 1927—1934 гг. она принимала деятельное участие в колхозном строительстве: следила за ходом подготовки и темпами коллективизации, за политическим и организационным укреплением колхозов, за разоблачением и обезвреживанием врагов колхозного движения, за

17 Նույն տեղում։

правильным применением примерного Устава сельскохозяйственных артелей.

Будучи озабоченной всемерным укреплением колхозов, она проделала большую работу по подготовке колхозных кадров, укреплению МТС, ограждению колхозной собственности от расхитителей, сокращению управленческих расходов и т. д.

ЦКК - РКИ в борьбе за коллективизацию в Армянской ССР добилась значительных успехов и удостоилась признания партии и трудящихся. Она сумела внести неоценимый вклад в дело осуществления предначертаний партии в колхозном строительстве и содействовала развитию многоотраслевого общественного сельского хозяйства в республике.